ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 29-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Մայր Տաճարում, Իրման Ս. Սեղանի առաջ, տեղի է ունենում Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձի առթիվ կառավարական մաղթանք։

Հանդիսության նախագահում է Վեհափառ Հայրապետը։

Գոհաբանական աղոթքին ներկա են Մայր Աթոռի միաբանները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։

Կառավարական մաղթանքից հետո, ժամը 1-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում կազմակերպվում է գրական-գեղարվեստական ցերեկույթ, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, նվիրված օրվա ազգային մեծ տոնի նշանակության։

Հանդիսության ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի քարտուղար տիկին Խաչատրյանը։

Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՌ Գեղական Հիմնի նվագով։

Այնուհետև Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը հանդես է գալիս Նոյեմբեր 29-ի պատմական և ազգային նշանակության նվիրված բացման խոսքով։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձին նվիրված բովանդակալից ճառով հանդես է գալիս Հոգևոր Ճեմարանի գրարար լեզվի դասախոս Ս. Անթոսյանը։

Հանդիսության ընթացքում գործադրության է դրվում Նոյեմբեր 29-ի խորհուրդը նշող գեղարվեստական հայտագիր, բաղկացած խմբերգերից, մեներգերից և արտասանություններից։

Հոգևոր Ճեմարանի ուսանողական երգչախումբը կատարում է «Ծաղկիր ազատ իմ Հայրենիք» և «Լեռների ուսին» խմբերգերը։ Գ դասարանի ուսանող Գ. Բունիաթյանը արտասանում է Ս. Կապուտիկյանի «Իմ Հայաստան»-ը, իսկ Բ դասարանի ուսանող Ս. Բոզոյանը՝ Հ. Թումանյանի «Հայրենիքիս հետ»-ը։

Հանդիսության ժամանակ խոսք է առնում Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի քարտուղար տիկին Խաչատրյանը և խանդավառ ծափերի մեջ, հանուն կոմիտեի շնորհավորելով, պատվոգրեր է հանձնում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին և գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանին՝ խաղաղության պաշտպանության ի նպաստ նրանց կատարած աշխատանքների համար։

Այնուհետև ողջույնի և օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը ազգային-պետական մեծ տոնի 42-րդ տարեդարձի առթիվ

և շնորհավորելով պատվոգրերի արժանացած գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն արքեպիսկոպոսներին, նշում է, որ այդ պատվոգրերը նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խաղաղասիրական գործունեության գնահատությունն են։

«Մենք,— եզրակացնում է վեհափառ Հայրապետը,— այսուհետև էլ կանգնած կլինենք միշտ, մեր հոգևորականներով և ճավատացյալ ժողովրդով, խաղաղության պաշտպանության դիրքերում, որովհետև Քրիստոնեությունը խաղաղության առաքելությունն է մարդկանց մեջ և աշխարհի վրա»։

Ապա Նորին Ս. Օծությունն օրհնում է Հայրենի աշխարհն ու աշխատասեր հայ ժողովրդին, բարեմաղթելով, որ խաղաղություն լինի համայն աշխարհում և բոլոր հայ երդիկների տակ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունը վերջանում է խմբովին երգված Տերունական աղոթքով։